ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/163

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Մայ Մարկետ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մայ Մարկետ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, գրենական պիտույքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9850-2021 գրությամբ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 11.06.2021թ.-ի թիվ 1/18-2/35825-2021 գրության հիման վրա, 17.06.2021թ.-ին «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.06.2021թ.-ին:

18.06.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/163 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

25.06.2021թ.-ին և 09.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.07.2021թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 11.06.2021թ.-ի թիվ 1/18-2/35825-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10 ծածկագրով գնման ընթացակարգի 02.06.2021թ. գնահատող հանձնաժողովի N 2 որոշմամբ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին առաջարկվել է հստակեցնել ներկայացված տեխնիկական բնութագրերը, սակայն վերջինիս կողմից ներկայացված շտկված փաստաթղթում 3-րդ չափաբաժնով ներկայացված

ապրանքի վերաբերյալ դեռևս առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես գրասենյակային լրակազմում հստակ չէր թե ինչ աքսեսուարներ են լինելու լրակազմի կազմում (սրիչ և/կամ ապակարիչ): Հաշվի առնելով վերոգրյալը «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մայ Մարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 18.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9850-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 22.06.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

««Մայ Մարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Մայ Մարկետ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ՊԵԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է հետևյալը. ««Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում ռուսերեն լեզվով անվանումը սխալ է լրացված,

կազմակերպական-իրավական ձևը լրացված չէ, իսկ համակարգում կցված տեխնիկական բնութագրերը հստակ չեն նկարագրում առաջարկվող ապրանքները»:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Նույն օրը «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովի կողմից որպես շտկման ծանուցում ուղարկվել է 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության պատճեն:

Այնուհետև, համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության. «Մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերի /տեխնիկական բնութագիրը հստակ չէ/, արդյունքում ՍՊԸ-ի հայտը թիվ 3 չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման

դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատաս¬խանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ՊԵԿ-ի կարիքների համար հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում ռուսերեն լեզվով անվանումը սխալ է լրացված, կազմակերպական-իրավական ձևը լրացված չէ, իսկ համակարգում կցված տեխնիկական բնութագրերը հստակ չեն նկարագրում առաջարկվող ապրանքները:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Նույն օրը «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովի կողմից որպես շտկման ծանուցում ուղարկվել է 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության պատճեն (առանձին ծանուցում չի ուղարկվել):

Իսկ արդեն համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության՝ մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերի /տեխնիկական բնութագիրը հստակ չէ/, արդյունքում ՍՊԸ-ի հայտը թիվ 3 չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժել:

«Մայ Մարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/163 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 46-րդ կետի ահանջները, որը սահմանում է, որ ներկայացված տեխնիկական բնութագրերում անհամապատաս¬խանություն արձանագրելու դեպքում

հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատաս-խանությունները: Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը, պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի նկարագրել արձանարված անհամապատաս-խանությունը, այլ ընդամենը վերացական նշվել է, որ համակարգում կցված տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրում առաջարկվող ապրանքները:

Այսինքն գնահատող հանձնաժողովի կողմից չի նշվել, թե ինչ անհամապատասխանություն է առկա տեխնիկական բնութագրում, ինչու է գնահատող հանձնաժողովը հանգել այն եզրակացության, թե տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրում առաջարկվող ապրանքները, ինչ մասով է այդ անհստակությունը, և, վերջապես, կոնկրետ ինչ թերություն է թույլ տվել ՍՊԸ-ն տեխնիկական բնութագրում, ինչ մասով է և ինչ պետք է հստակ շտկի:

Հատկանշական է այն, որ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին ուղարկված շտկման ծանուցման փոխարեն ուղղակի մասնակցին ներկայացվել է արձանագրություն թիվ 2-ը, որում որպես գնահատող հանձնաշողովի կողմից արձանագրված անհամապատասխանություն արձանագրվել է միայն վերացական մի նախադասություն՝ համակարգում կցված տեխնիկական բնութագրերը հստակ չեն նկարագրում առաջարկվող ապրանքները և վերջ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նույնիսկ այս ոչ իրավաչափ շտկման պարագայում՝ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է շտկումը՝ իրեն համար ընկալելի սահմաններում և այն սահմանված ժամկետում ներկայացվել գնահատող հանձնաժողովին:

Խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովի հայտը մերժելու որոշմամբ էլ չի արձանագրվել, թե ի վերջո, ինչ խնդիր է առկա եղել տեխնիկական բնութագրում, այլ ընդամենը արձանագրվել է, որ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի ներկայացված տեխնիկական բնութագիրը հստակ չէ, ինչի արդյունքում մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Փաստորեն, գնահատող հանձնաժողովի ո՛չ թիվ 2 և ո՛չ էլ թիվ 3 արձանագրություններից այդպես էլ պարզ չի դառնում, թե «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի ներկայացված տեխնիկական բնութագրում ինչ թերություն է արձանագրվել գնահատող հանձնաժողովի կողմից և շտկման արդյունքում ինչ հիմքով է մերժվել մասնակցի հայտը:

Մինչդեռ Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար, ինչը տվյալ դեպքում բացակայել է:

Վերոհիշյալի արդյունքում անկհայտորեն խախտվել է իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները), քանի որ թե նման բովանդակությամբ ծանուցում ստանալիս, թե հայտը մերժելու որոշումը ստանալիս՝ անհասկանալի է եղել, թե կոնկրետ ինչ անհամապատաս¬խանություններ են արձանագրվել տեխնիկական բնութագրում, հստակ ինչ պետք է շտկվեր մասնակցի կողմից, և ի վերջո, հայտը կոնկրետ ինչ անհամապատասխանության հիմքով է մերժվել:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տարիների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/163 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով 21.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Աճուրդ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.06.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում ռուսերեն լեզվով անվանումը սխալ է լրացված, կազմակերպաիրավական ձևը լրացված չէ, իսկ համակարգում կցված տեխնիկական բնութագրերը հստակ չեն նկարագրում առաջարկվող ապրանքները:

v. Նույն արձանագրության 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 07.06.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին (տեխնիկական բնութագիրը հստակ չէ):

vii. Նույն արձանագրության 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9850-2021 գրությամբ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը

գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով 21.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերով սահմանվում են այն դեպքերը, երբ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված

գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով 21.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 02.06.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի «բ» ենթակետով արձանագրվել է, որ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում ռուսերեն լեզվով անվանումը սխալ է լրացված, կազմակերպաիրավական ձևը լրացված չէ, իսկ համակարգում կցված տեխնիկական բնութագրերը հստակ չեն նկարագրում առաջարկվող ապրանքները, ինչով պայմանավորված, նույն արձանագրության 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովի 07.06.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին (տեխնիկական բնութագիրը հստակ չէ) և նույն արձանագրության 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը

պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Գործադիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի

քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին, հակառակ դեպքում՝ հայտի մերժման դեպքում արձանագրությամբ պետք է նկարագրվի հայտի մերժման հիմքերը:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապա-տասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը, Մասնակցի հայտի թիվ 1.1 հավելվածում

արձանագրելով անհամապատասխանություններ, մանրամասն չի նկարագրել դրանցում և տեխնիկական բնութագրերում հայտնաբերված անհամապատասխանությունները, ինչի արդյունքում Մասնակցին տրվել է շտկման հնարավորություն, իսկ ապա, նույն հիմքով, Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, և որպես մերժման հիմք նշվել է այն, որ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական բնութագրերը հստակ չեն՝ հստակ չնկարագրելով մերժման հիմքերը, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտում անհամապատասխանությունները շտկելու մասին և դրա արդյունքում վերջինիս հայտը մերժելու մասին կայացված որոշումները չեն բխում Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, Կարգի 41-րդ և Հրավերի 8.11-րդ կետերի դրույթներից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող,

կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի

6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9850-2021 գրությամբ «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/163 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**